Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի տեղակալ Գեղամ Վարդանյանի գործուղման արդյունքների մասին

- **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

  Գեղամ Վարդանյան

- **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆ**

  ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի տեղակալ

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

  Ղազախստանի Հանրապետություն (ք. Նուր-Սուլթան), ս.թ.մայիսի 16–17-ը

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿ**

  Աստանայի տնտեսական ֆորումին մասնակցելու նպատակով

- **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐ / ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ**

Այս տարի Աստանայի տնտեսական 12-րդ ֆորումի աշխատանքը նվիրված է եղել «Ոգեշնչող աճ. մարդիկ, քաղաքներ, տնտեսություններ» թեմային, որին հրավիրված էին պետությունների գործող և նախկին ղեկավարներ, այդ թվում՝ ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանը, հայտնի քաղաքական գործիչներ,Նոբելյան մրցանակակիրներ, «Fortune 500» ցանկում ներառված ընկերությունների ղեկավարներ, աշխարհահռչակ մշակութային գործիչներ, ինչպես նաև այլ բարձրաստիճան,նշանավոր անձինք:

Ֆորումի խոսնակներն էին մի շարք քաղաքական գործիչներ, գիտնականներ և տնտեսագետներ, համաշխարհային մակարդակի հռչակավոր գործիչներ, միջազգային կազմակերպությունների, ֆինանսական ինստիտուտների և բիզնես-էլիտաների ներկայացուցիչներ:

Միջոցառման հիմքում ընկած էին այդպիսի թեմաներ, ինչպիսիք են սրընթաց և հիմնովին փոփոխությունները երկրների տնտեսություններում, սոցիալական բնագավառում, թվային տեխնոլոգիաներում, արտադրության և սպառման մեջ:

Աստանայի տնտեսական 12-րդ ֆորումը բաղկացած էր զուգահեռաբար անցկացվող նիստերի աշխատանքներից:

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի տեղակալ Գեղամ Վարդանյանը մասնակցել է հետևյալ նիստերի աշխատանքներին. «Աշխատանքի ոլորտի ապագան», «Պետության դերակատարությունը վենչուրային կապիտալի զարգացման մեջ», «Պետություն և թվային անվտանգության էկոհամակարգ», «Ընթացակարգեր, տեխնոլոգիաներ, կադրեր: Թվային անվտանգության հիմքը», «Նորարարություններ որպես

ավտոմոբիլային արդյունաբերության ապագա», «Խելացի քաղաքներ որպես թվային տնտեսության հիմք», «Քաղաքների փոխակերպումը չորրորդ արդյունաբերական հեղափոխության դարաշրջանում», «Թվային փոխակերպումը որպես նոր հարաբերություններ ԵԱՏՄ-ում» և այլ նիստերին:

Վերոնշյալ ֆորումի շրջանակում Գ.Վարդանյանը նաև մի շարք երկկողմ հանդիպումներ է ունեցել, մասնավորապես՝

- ՂՀ թվային զարգացման, պաշտպանական և օդատիեզերական արդյունաբերության նախարարի տեղակալներ Նուրգուժին Մարատի և Օսպանով Աբլայխանի,
- ՂՀ արդյունաբերության և ենթակառուցվածքների զարգացման նախարարի տեղակալ Ամանիյազ Երժանովի,
- ՂՀ կրթության և գիտության նախարար Կուլյաշ Շամշիդինովայի և նախարարի տեղակալ Ռուստեմ Բիգարիի,
- «Национальная компания «Қазақстан Ғарыш Сапары» ԲԸ կառավարման նախագահ Ազամատ Բայկուանիշուլի Բատիրկոժայի,
- «Байтерек» ԲԸ-ի գործադիր տնօրեն Ադիլ Նուրգոժինի,
- ՂՀ Համաշխարհային բանկի ներկայացուցչության Առևտրի և մրցունակություն քաղաքականության վարչության մասնավոր հատվածի զարգացան գծով ավագ մասնագետ Եռալի Բեկսուլթանի,
- Ալմատիի էներգետիկայի և կապի համալսարանի գործադիր տնօրեն Մախմուտ Տոմանովի,
- «Quest» վենչուրային հիմնադրամի կառավարիչ-գործընկեր Ջեյմս Թանի,
- «Enterprise Singapore» ընկերության նորարարության հարցերով գործադիր տնօրենի օգնական Էդվին Չոուի հետ:

ՂՀ թվային զարգացման, պաշտպանական և օդատիեզերական արդյունաբերության նախարարի տեղակալներ Մարատ Նուրգուժինի և Աբլայխան Օսպանովի հանդիպումների ընթացքում Գ.Վարդանյանը ներկայացրեց Հայաստանի և Ղազախստանի միջև նորարարական համագործակցության համար մշակված մեխանիզմերը: Վերջինիս կողմից առաջարկվեց համատեղ աշխատանքներ իրականացնել ժամանակակից միջոցների, կապի միջոցների և բարձր տեխնոլոգիաների, ինչպես նաև վարորդին աջակցության ժամանակակից միջոցների (ADAS) ոլորտների ուղղությամբ: Կողմերը նաև քննարկեցին գիտահետազոտական և փորձակառուցողական աշխատանքների համատեղ իրականացման, ինչպես նաև ՂՀ տեխնոպարկերի և «Ինժեներական քաղաք»-ի (Engeneering City) միջև հնարավոր համագործակցությունը: Երկու նախարարությունների միջև ակնկալվող փոխգործակցության զարգացման նպատակով փոխնախարարները պայմանավորվեցին, որ հայկական կողմը կտրամադրի թվայնացման ոլորտում Հայաստանում տիրող իրավիճակի, ինչպես նաև հայկական SS արտադրանքի և լուծումների վերաբերյալ տեղեկատվություն:

ՂՀ արդյունաբերության և ենթակառուցվածքների զարգացման նախարարի տեղակալ Ամանիյազ Երժանովի հետ հանդիպման ընթացում քննարկվել են երկուստեք հետաքրքրություն ներկայացնող հարցեր:

Ազամատ Բայկուանիշուլի Բատիրկոժայի հանդիպման ընթացքում քննարկվեց ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության և

«Национальная компания «Қазақстан Ғарыш Сапары» ԲԸ կառավարման միջև հնարավոր համագործակցության հարցը, ինչպես նաև վերջինիս փոխգործակցությունը «Ինժեներական քաղաք»-ի (Engeneering City) հետ:

«Национальная компания «Қазақстан Ғарыш Сапары» ԲԸ կառավարման նախագահ Ազամատ Բայկուանիշուլի Բատիրկոժայի հանդիպմանը ներկա էր նաև ՂՀ Համաշխարհային բանկի ներկայացուցչության Առևտրի և մրցունակություն քաղաքականության վարչության մասնավոր հատվածի զարգացան գծով ավագ մասնագետ Եռալի Բեկսուլթանին: Համատեղ հանդիպմանը դիտարկվեց Հայաստանի մասնակցությունը Ղազախստանում տիեզերքի դպրոցի հիմնման հարցում: Ուսումնասիրելով հարցը՝ Գեղամ Վարդանյանը հայտնեց, որ Հայաստանը պատրաստակամ է աջակցություն ցացաբերել՝ հաշվի առնելով ՀՀ մեծ փորձը նմանատիպ դպրոցների ստեղծման հարցում: Ընկերության նախագահը ողջունեց Գ.Վարդանյանի առաջարկը և հայտնեց, որ հայկական կողմը անշուշտ կներգրավվի դպրոցի ստեղծման գործընթացում: Եռալի Բեկսուլթանին իր կողմից տեղեկացրեց, որ իրենց կողմից հնարավոր է նախագծի մասնակի ֆինանսավորում:

ՂՀ կրթության և գիտության նախարար Կուլյաշ Շամշիդինովայի և նախարարի տեղակալ Ռուստեմ Բիգարիի հանդիպման ժամանակ նույնպես քննարկվեցին երկուստեք հետաքրքրություն ներկայացնող հարցեր:

Գեղամ Վարդանյանի կողմից ներկայացվեց Հայաստանում կիրառվող կրթական տեխնոլոգիաների հաջողված փորձը («Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն, «Armat» և «ANEL» ինժեներական լաբորոտորիաներ, «GITC» և «VTC» կենտրոններ) և տվյալ ուղությամբ ևս անդրադարձ եղավ փոխգործակցությանը:

Կուլյաշ Շամշիդինովան իր կողմից ներկայացրեց Ղազախստանի դպրոցներում տեխնոլոգիական կրթության տենդենցները: Նա ասաց, որ շատ լավ ծանոթ է «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի, «Այբ» կրթական հիմնադրամի հետ, ինչպես նաև իր հետաքրքրությունն է հայտնել հայկական ինժեներական խմբակների ուղղությամբ:

Այնուհետև ՂՀ կրթության և գիտության նախարար Կուլյաշ Շամշիդինովայիի հրավերով ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարը այցելեց «Նազարբայեվ» մտավոր դպրոցներ (NIS): «Նազարբայեվ» մտավոր դպրոցները նպատակաուղղված են դառնալ փորձագիտական հարթակ, որը կիրականացնի տարրական (ներառյալ նախադպրոցական կրթություն և վերապատրաստում), հիմնական և ավագ դպրոցների համապատասխան կրթական ծրագրերի ժամանակակից մոդելների մշակումը, մոնիթորինգը, ուսումնասիրությունը, վերլուծությունը, փորձարկումն ու կիրառումը: Այցի շրջանակներում հանդիպում կայացավ նաև դպրոցի տնօրեն Սվետլանա Իսպուսինովայի հետ, ում հետ խոսվեց նաև Ղազախստանում տիեզերքի դպրոցի հիմնման մասին: Վերջինս ողջունեց այդ գաղափառը և համաձայնվեց իր աջակցությունը ցուցաբերել նշյալ նախագծի իրականացման գործում:

«Байтерек» ԲԸ-ի գործադիր տնօրեն Ադիլ Նուրգոժինի և Գեղամ Վարդանյանի միջև քննարկվեց ընկերության հնարավոր մասնակցությունը հայկական ստարտափների հետ կապված նախագծերում, ինչպես նաև վերջինիս կողմից ստարտափների ֆինանսավորման հարցը:

Ալմատիի էներգետիկայի և կապի համալսարանի գործադիր տնօրեն Մախմուտ Տոմանովի հանդիպման ժամանակ Գ.Վարդանյանի կողմից ներկայացվեց Հայաստանում

կիրառվող կրթական տեխնոլոգիաների հաջողված փորձը («ANEL» ինժեներական լաբորոտորիաներ, «GITC» և «VTC» կենտրոններ): Մ.Տոմանովին մասնավորապես հետաքրքրեցին Հայաստանի ազգային ճարտարագիտական լաբորատորիաները («ANEL» ինժեներական լաբորատորիաներ), որի ուղղությամբ երկու կողմերը պայմանավորվեցին համագործակցել:

«Quest» վենչուրային հիմնադրամի կառավարիչ-գործընկեր Ջեյմս Թանիի և «Enterprise Singapore» ընկերության նորարարության հարցերով գործադիր տնօրենի օգնական Էդվին Չոուի ներածական հանդիպումների ընթացքում քննարկումները ևս ծավալվեցին փոխգործակցության շուրջ: Էդվին Չոուին իր հերթին պատրաստակամություն հայտնեց Սինգապուր ՀՀ պատվիրակության այցի ժամանակ աջակցություն ցուցաբերել սինգապուրյան բարձր տեխնոլոգիական ընկերությունների հետ հանդիպումներ կազմակերպելու հարցում:

Յուրաքանչյուր հանդիպման ընթացքում ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի տեղակալ Գ.Վարդանյանը տեղեկացրել է ՀՀ կառավարությունում տեղի ունեցող կառուցվածքային փոփոխությունների մասին, մասնավորապես՝ վերոնշյալ Նախարարության փոխակերպումը ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության:

Փոխնախարարը նաև բոլորին հրավիրեց մասնակցել այս տարի Երևանում կայանալիք երկու կարևոր միջոցառումներին՝ հունիսի 24–26-ի «Ինժեներական շաբաթ»-ին և հոկտեմբերի 6–9-ի «WCIT–2019»-ին:

- **ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

ՀՀ տրանսպորտի, կապի և
տեղեկատվական տեխնոլոգիաների

X _____

նախարարի տեղակալ՝

Գեղամ Վարդանյան